

## IV ԴԱՐԱՍԿՂԲԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱԿԱՆ ԵՐՐՈՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### Ա. Գ. ՔԱԼԱՎՅԱՆ

ԵՊՅ Կրոնի պատմության և տեսության ամբիոնի վարիչ,  
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Առաջին հայացքից թվում է, թե IV դարասկղբի երրորդաբանական վիճաբանությունների վերլուծությունը բավականին պարզունակ գործընթաց է, քանի որ թե՝ անցյալի և թե՝ ներկա վերլուծաբաններն այդ հարցում հանգում են միանշանակ եզրահանգման՝ ի օգուտ հակարիոսական հոսանքի: Պետք է նկատել, սակայն, որ ննան մոտեցումը հիմնահարցի խորքային վերլուծությանը չի նպաստում, քանի որ ելակետ է ընթունվում վերջնական արդյունքը՝ արիոսականության կրախը: Այնինչ ուղղաղավան եկեղեցին և հոգևոր դասը հակարիոսական պայքարում չափազանց ծանր և կորուստներով լեցուն ճանապարհ են անցել:

Այդ տեսանկյունից մինչնիկեական հակարիոսական երրորդաբանության եռթյան և հավատքային առանձնահատկությունների ուսումնասիրությունը պահանջում է վերջինիս աստվածաբանական և տեսական հիմքերի համակողմանի վերլուծություն: Այդ մոտեցումը կարևորվում է նաև այն տեսանկյունից, որ IV դարի 20-ական բվականների սկզբին հակարիոսական երրորդաբանությունը ծավալվել է այն պայմաններում, երբ արիոսականությունն արդեն ազդեցիկ աջակցներ էր ձեռք բերել ոչ միայն Ալեքսանդրիայում, Նիկոնեղիայում և Պաղեստինում, այլև՝ Փոքր Ասիայի և Արևելքի նշանավոր եկեղեցական այլ կենտրոններում:

Եկա մեկ նկատառում: Վերլուծաբանների ազդեցիկ մեծամասնությունը դարշջանի դոգմատիկական վիճաբանությունների ծավալումը ձգտել է բացատրել՝ իհմք ընդունելով Պաղեստինի և Բյութանիայի 323 թ. արիոսամետ ժողովների, ինչպես նաև՝ Եվսեբիոս Նիկոմեդացու և Եվսեբիոս Կեսարացու կողմնակալ գործունեությունը: Նրանք պնդում են նաև, որ նշվածի արդյունքում արիսականության պաշտպանությամբ հանդես են եկել եկեղեցական այլ կենտրոնների՝ Եփեսոսի, Անտիոքի, Կապադովկիական Կեսարիայի և բազմաթիվ այլ վայրերի եպիսկոպոսները: Կարծիք կա նաև, թե Եվսեբիոսների անձնական կապերի շնորհիվ նախապես արիոսամետ դիրքորոշում է որդեգրել նաև Կոստանդին կայսրը<sup>1</sup>:

Այդ մոտեցումներն, անշուշտ, ռացիոնալ հատիկ պարունակում են: Սակայն այստեղ ստվերում է մնում գլխավոր հարցը՝ ի՞նչ բնութագրական առանձնահատկություն ուներ դարաշրջանի հակարիոսական հոսանքը և ինչպիսի՝ դոգ-

<sup>1</sup> Այդ տեսակետի պաշտպանությամբ են հանդես գալիս բազմաթիվ վերլուծաբաններ, տես, օրինակ, **Болотов В. В.** Լեկցիա ուստուրուս Դրենեյ Цերկви. Տ. 4, Մ., 1994, ս. 8; **Бриллюантов А. И.** Լեկցիա ուստուրուս դրենեյ Цերկви. СПб., 2007, ս. 103-104; **Иоанн еписк. Аксайский.** История Вселенских Соборов. М., 1995, ս. 13-5; **Карташев А. В.** Вселенские Соборы. СПб., 2002, ս. 20-21; **Поснов М. Э.** История Христианской Церкви (до разделения Церкви – 1054 г.). Брюссель, 1964, ս. 337-338; A history of the Christian Church (ed. by Williston Walker), 4th ed. New York, 1985, p. 620; **Schaff Ph.** History of the Christian Church. Vol. 2, Masashussets, 1995, p. 777 և այլն:

մատիկական հայեցակարգ էր հակադրում արիոսականության: Այդ հարցերի պարզաբանումն օրգանապես կապվում է առանցքային նշանակության մի այլ հիմնահարցի հետ. ի՞նչն էր պատճառը, որ հենց «սրբազն գիտությունների կենտրոն» Ալեքսանդրիայում ծավալվեց Եկեղեցական պատմության ամենազդեցիկ հերձվածողական շարժումներից մեկը:

Եկեղեցական պատմագրությունն այդ հարցին քիչ թե շատ ամբողջական պատասխան չի տալիս: Բանն այն է, որ արիոսականության ձևավորման վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները բավականին աղքատիկ են և հակասական, որի պատճառով աստվածաբան Ա. Սպասկին իրավացիորեն մատնանշում է, որ այդ շարժման պատմության վաղ փուլի մանրամասները գիտության համար միշտ էլ կմնան քիչ թե շատ վարկածային<sup>2</sup>: Այդուհանդերձ անառարկելի է մեկ բան՝ արիոսականությունը ձևավորվել և պատմական ասպարեզ է իջել դոգմատիկական վիճաբանությունների շրջանակներում: Իսկ դրանից հետում է, որ ժամանակի հակաարիոսական շարժման ձևավորման և էլության պատմահամենատական վերլուծությունը ևս պետք է սերտորեն շաղկապել մինչնիկեական դոգմատիկական զարգացումների պատմությանը: Նշված մոտեցումը պետք է կարևորել նաև այն առումով, որ աղբյուրների հակասականության պատճառով մինչ օրս այս ոլորտում միասնական լուծումներ չեն առաջադրել: Դիմնական հարցերում հետազոտական կողմնորոշումները հեղինակներին բաժանել են երկու խմբի: Առաջինը արիոսականության հիմք է համարում միապետական հակաերրորդաբանությունը և Յայր և Որդի Աստծու ստորադասության որիգենական վարդապետությունը, իսկ երկրորդներն այդ որակով դիտարկում են էրիոնիական-միապետական հերձվածը՝ Պողոս Սամոսատցի-Դուկիանոս Սամոսատցի-Արիոս առանցքային անցման ձևով:

Այդ տեսակետներին հակադիր է Ա. Սպասկու մոտեցումը, որն Ալեքսանդրիայում մրցակցող դոգմատիկական շարժումների ձևավորումը համարում է օրինաչափ: Այդ մասին նա գրում է. «Ունուս երկրորդ դարի վերջին այդ Եկեղեցին (ալեքսանդրիական՝ Ա. ք.) վերածվեց Արևելքի աստվածաբանական զարգացման կենտրոնի և քրիստոնեական աշխարհում առանձնահատուկ փառք ձեռք բերեց՝ փիլիսոփայական Եկեղեցու փառք, որում երբեք չի թուլացել հավատի և գիտելիքի բարձրագույն հարցերի նկատմամբ հետաքրքրությունը: ... Ալեքսանդրիայի Եկեղեցին ինքն էր նպաստում աստվածաբանական տարբեր խմբերի ձևավորմանը»<sup>3</sup>: Կավերագրերը դա բացատրում են նրանով, որ բավականին «անկախ»

<sup>2</sup>Տես **Спасский А.** История догматических движений в эпоху Вселенских Соборов (В связи с философскими учениями того времени). Тринитарный вопрос (История учения о св. Троице). Сергиев Посад, 1914, с. 137.

<sup>3</sup>Նույն տեղում, էջ 133-134: Արժանահիշատակ է, որ ավանդության համաձայն ալեքսանդրիական Եկեղեցին եղել է Եգիպտոսի, Լիբիայի և Պենտապոլսի ճանաչված նվիրապետական կենտրոնը, իսկ նրա հոգևոր առաջնորդը Յոնի նվիրապետից անհամեմատ վաղ մեծարվել է «պապ» (որոշ նվիրապետներ՝ միտրոպոլիտ, պատրիարք, նաև՝ եպիսկոպոս) տիտղոսով, տես **Деяния Вселенских Соборовъ . Т. I / I, II, III Соборы. СПб., 1996, с. 73; Epiphanius S. P. N. Adversus Octoginta haereses / Migne J. P. Patrologiae cursus completus. Series Graeca** (այսուհետև՝ PG). T. XLII, Lib. II, T. II. Parisis, 1863, haer. LXIX: Contra Ariomanitas), col. 1; տես նաև **Եւսեբիոսի Կեսարացւոյ,** Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ, 1887, դպր. VII, գլ. Է, էջ

Են եղել նաև ալեքսանդրիական քահանաները: Այդպիսի փաստերից մեկին էլ առնչվում ենք արիոսական վիճաբանությունների վաղ փուլում: Դրանով էր թելադրված նաև այն, որ հակարիոսական ջատագովության ժամաշված առաջնորդ Ալեքսանդր Ալեքսանդրացին հարկադրված էր հերձվածի դեմ պայքար ծավալել ինչպես դիսցիպլինար-կանոնական, այնպես էլ աստվածաբանական-դոգմատիկական ճակատներում: Եվ որ գլխավորն է, հենց այդ համատեքստում պետք է քննարկել նաև Ալեքսանդր Ալեքսանդրացու հակարիոսական գործունեության մոտիվները, ինչպես նաև՝ երրորդաբանական վարդապետությունը:

Եկեղեցական մատենագրությունը հավաստում է, որ Արիոս քահանան մեծ հարգանք է վայելել, որի պատճառով նրա ծխականներն իրենց անվանել են «արիոսական»<sup>4</sup>: Ալեքսանդր Ալեքսանդրացին և բարձր կարծիք է ունեցել Արիոսի նվիրապետական գործունեության մասին<sup>5</sup> և սերտ հարաբերություններ է ունեցել նրա հետ<sup>6</sup>: Հավաստվում է նաև, որ Արիոսը աչքի էր ընկնում «ասկետական կյանքով, բարեհամբույր էր զրույցների ընթացքում և մարդկանց վրա ազդել է համոզմունքով և հաճոյակատարությամբ<sup>7</sup>: Իսկ Արիոսի դիալեկտիկական և էկ-

532, հմտ.՝ *Св. Афanasius Великий*. Зашитимительное слово промтвъ арианъ / *Св. Афanasius Великий*. Творения в четырех томах. Т. I, М., 1994, с. 366, 370, 372. Բուն քաղաքի թեմական կառույցը կազմակերպված էր ըստ թաղամասերի: Ս. Մարկոսի մայրավանքից բացի յուրաքանչյուր թաղամաս ուներ քահանաների կողմից դեկապոլի իր ծխական եկեղեցին: Նվիրապետական ծառայությանը զուգընթաց քահանաներն օժտված են եղել ևս երկու բացառիկ լիազորություններով: Նրանց է վերապահվել Աստվածաշնչի մեկնության և համայնքին քարոզելու, ինչպես նաև՝ առանց թեմական եպիսկոպոսի համաձայնության աշխարհիկներին եկեղեցու վարելու իրավունքը (տե՛ս *Epiphanius S. P. N. Adversus Octoginta haereses, haer. LXIX, col. 1*; *Горский А. В.* Խոչն Տվ. Աֆանասիա Վելիկոց, Արքունիքուն Ալեքսանդրուն / *Св. Афanasius Великий*. Творения в четырех томах. Т. I, М., 1994, с. 23, որ): IV դարասկզբին Ալեքսանդրիայի արորի ենթակայության տակ գործել են շուրջ 100 եպիսկոպոսներ, 45 քահանաներ և 56 սպուկավագներ, տե՛ս *Св. Афanasius Великий*. Зашитимительное слово промтвъ арианъ, с. 374, 379, 381; *Epiphanius S. P. N. Adversus Octoginta haereses, haer. LXIX, col. 1*: Հմտ.՝ History of the Patriarchs of the Coptic Church of Alexandria / Patrologia Orientalis. T. 1, 4, Paris, 1905, p. 40; *Спасский А. А.* Начальная стадия арианских движений и Первыи Вселенскии Собор в Никее. Исследования по истории древней Церкви. СПб., 2007, с. 7-8:

<sup>4</sup> Տե՛ս *Epiphanius S. P. N. Adversus Octoginta haereses, haer. LXIX, col. 2*:

<sup>5</sup> Տե՛ս *Созомен Эрмий Саламинский*. Церковная История. СПб., 1851, кн. I, гл. 15, с. 57:

<sup>6</sup> Փիլոստորգիոսն, օրինակ, հավաստում է, թե Ալեքսանդրիայի Պետրոս պատրիարքի մահվանից հետո Արիոսը և Ալեքսանդր եղել են նոր պատրիարքի հավակնորդների թվում և «երր աքրության վիճակն Արիոսին բաժին ընկավ (ընտրվեց պատրիարք՝ Ա. Ք.), Արիոսը գերադասեց Ալեքսանդրին և այնպես արեց, որ վիճակն անցնի նրան», տե՛ս Сокращеное церковноу истории. Фулоосторгия (сделанная патриархом Фотием). СПб., 1854, с. 319. Մեր համոզմամբ փաստական հիմնավորում չունեցող հակադիր տեսակետ է արտահայտում Թեոդորետը, որը գրում է, թե եպիսկոպոսական ընտրության ժամանակ Ալեքսանդր Ալեքսանդրացու առավելության պատճառով Արիոսը նրա նկատմամբ հակադիր դիրքորոշում է որդեգրել և, թշնամանքի և վիճաբանության պատճառներ որոնելով, շեղվել եկեղեցական ուսումնունքից, տե՛ս *Феодорит еписк. Кирский*. Церковная История. СПб., 1860, кн. I, гл. 2, с. 14-15:

<sup>7</sup> Տե՛ս *Epiphanius S. P. N. Adversus Octoginta haereses, haer. LXIX, col. 3*:

զեգետիկական օժտվածությունը եղել է այն հենքը, որի պատճառով Ալեքսանդր Ալեքսանդրացին հենց նրան է հանձնարարել Աստվածաշնչի բացատրության և մեկնության գործը<sup>8</sup>: Արժանահիշատակ է նաև, որ նախնապես Արիոսի քարոզները անհանգստության տեղիք չեն տվել: Նրա տեսակետները ուշադրության են արժանացել այն ժամանակ միայն, երբ աստվածաշնչական «Տերն ինձ ստեղծեց իր ժանապարհի սկզբին (**Առակ.**, 8: 22)» հատվածի մեկնությամբ փորձել է հիմնավորել, թե Որդին արարված է Աստծու կողմից<sup>9</sup>: Սակայն Ալեքսանդր եպիսկոպոսն այն համարել է աստվածաբանական վիճարանական հիմնահարց<sup>10</sup> և չեզոքություն պահպանելով՝ ձգտել է «քացառել ամեն մի հարկադրանք» և կողմերին հաշտեցնելու նպատակով նրանց «արտահայտվելու հնարավորություն է տվել»<sup>11</sup>:

Դետագա բանավեճերի ընթացքում «Արիոսը պաշտպանել է իր դրույթները՝ Աստծու Որդին արարվել է ոչնչից, եղել է ժամանակ, երբ Նա չի եղել, Նա ընդունակ է բարին և չարը գործելու»<sup>12</sup>, իսկ ընդդիմադիր թեսն ապացուցել է, որ Որդին իրական Աստված է և «Չորր հավերժակից»: Այս անգամ Ալեքսանդր Ալեքսանդրացին Արիոսից պահանջել է մի կողմ թողմել «Մտքի հակասությունը» և համերաշխել Եկեղեցական ավանդության հետ: Սակայն խրախուսվելով այն բանից, որ իրեն պաշտպանել են բազմաթիվ հոգևորականներ, այդ թվում և եպիսկոպոսներ՝ Արիոսը հրաժարվել է կատարել նվիրապետի պահանջը, որից հետո

<sup>8</sup> Տե՛ս **Փեօդօրում եպիսկ. Կիրքական**. Церковная История, кн. I, гл. 2, с. 14:

<sup>9</sup> Այդ տեղեկությունը փաստվում է Երկու սկզբնադրյուրներով՝ Եվսեբիոս Նիկոմեդացուն ուղղված Արիոսի նամակով (բնագիրը տե՛ս **Eriphani S. P. N. Adversus Octoginta haereses**, haer. LXIX, col. 6; **Փեօդօրում եպիսկ. Կիրքական**. Церковная История, кн. I, гл. 5, с. 37-38) ինչպես նաև՝ Աթանաս Ալեքսանդրացու վկայությամբ՝ **Св. Аֆանасию Великому**. Послание о соборахъ, бывшихъ въ Ариминъ импалийскомъ и въ Селевкии исаврийскомъ / **Св. Аֆանасию Великому**. Творения в четырех томах. Т. III, М., 1994, с. 108-109:

<sup>10</sup> Տե՛ս **Հովուած Էրմին Սալամինական**. Церковная История, кн. I, гл. 15, с. 57.

<sup>11</sup> Սանրամանները տե՛ս նույն տեղում, էջ 58:

<sup>12</sup> **Сократ Схоластик.** Церковная история, кн. I, гл. 5, с. 10. Սոկրատես պատմիչը պնդում է նաև, որ Ալեքսանդր եպիսկոպոսը «Ենթակա քահանաների և այլ կղերականների ներկայությամբ փիլիսոփայորեն դատելով բարեպաշտ կերպով աստվածաբանել է Սուրբ Երրորդություն մասին, պնդելով որ Սուրբ Երրորդությունը մեկ է: Նրան Ենթակա քահանաներից մեկը՝ Արիոս՝ դիակելեկության իմացությամբ մարդ, մտածելով, որ եպիսկոպոսը քարոզում է Սաբել Լիթեացու վարդապետությունը, ... հակվել է Սաբելին հակադիր տեսակետի և կոպիտ հակադրվելով եպիսկոպոսի խոսքերին, ասել է, որ եթե Յայրը ծնել է Որդիուն, ապա ծնվածը կեցության սկիզբ ունի. իսկ այդտեղից ակնհայտ է, որ եղել է ժամանակ, երբ Որդին չի եղել և անհրաժեշտաբար հետևում է, որ Որդին անհատականություն է ծնոք բերել ոչ կեցությունից» (նույն տեղում):

<sup>13</sup> Եպիփան Կիպրացին հաղորդում է, որ Արիոսի պաշտպանության դիրքերում էին կանգնել 700 կույսեր, 12 սարկավագներ, 7 քահանաներ և մարզային երկու եպիսկոպոսներ, տե՛ս **Eriphani S. P. N. Adversus Octoginta haereses**, haer. LXIX, col. 3: Իսկ Ալեքսանդր Ալեքսանդրացու պաշտպանությամբ հանդես են եկել 26 քահանաներ (ներառյալ՝ Մարեոսի 9 քահանաները) և 44 սարկավագներ (ներառյալ՝ Մարեոսի 20 սարկավագ): Անա այդ պատճառով էլ սկզբնադրյուրները համարում են, որ բուն Ալեքսանդրիայում Արիոսին պաշտպանում էր կրթականների գորեք կեսը, իսկ թեմի շրջանակներում՝ <sup>1/3</sup> -ը:

«Ալեքսանդրը Եկեղեցուց Վտարել է ինչպես Արիոսին, այնպես էլ այն կղերական-ներին, որոնք պաշտպանում էին նրան»<sup>14</sup>: Այդ ամենը, սակայն, սպասվող արդյունքների չի հանգեցրել: Յակառակը, դա պատճառ է դարձել, որպեսզի վիճաբանական հարցը, նվիրապետության կանոնական շրջանակներից դուրս գալով, կարծ ժամանակում վերածվի համաեկեղեցական խնդրի<sup>15</sup>:

Մեզ հասած վավերագրերը թույլ են տալիս փաստել, որ Արիոսի վարդապետության համակարգում Աստված բնութագրվել է իբրև Ենրիկակ, հավիտենական, անսկիզբ և անայլայլելի եղակիություն: Նա համարվել է միակ արարիչը, արդարադատը, բարիքը և գերագույն իշխանությունը: Նրա համոզմանը աստվածային ներփակ այդ եղակիությունն էլ բացարձակ անհնար է դարձրել հավասարազոր էռության կամ այլ ուժի գոյությունը, որի հիման վրա Արիոսը հանգել է Քրիստոսի աստվածային էռության մերժմանը: Նա պնդել է, թե արարված բոլոր էակների նման Քրիստոսը ևս ունի ազատ կամք, հետևաբար՝ Ենթակա է փոփոխության: Այդ դրույթից ինպիցիտ հետևում է նաև, որ Քրիստոսն ունեցել է ժամանակային բնութագրություն, կամ, ավելի ճիշտ՝ «սահմանափակ» է ժամանակի մեջ: Եվ, քանի որ ամեն մի փոփոխություն անխուսափելի հորեն Ենթադրում է ժամանակային սկիզբ կամ պատմականություն, Արիոսն այդ տրանաբանությամբ է բացատրել նաև Քրիստոսի «անծնական ազատությունը» և պնդել է, թե Նա կատարյալ էր միայն այնքանով, որքանով «ցանկացել է կատարյալ մնալ», իսկ եթե դա չի ցանկացել, կարող էր նաև փոփոխվել<sup>16</sup>:

Արիոսականությանը բնորոշ է եղել երիոնիական մեկ այլ հիմնարար հետևություն ևս, համաձայն որի Քրիստոսը Յայր Աստծուց տարանջատ է ոչ միայն էռությամբ, այլև՝ ժամանակային գործոնով: Եվ այդ մոտեցմամբ նա ոչ միայն ուղղակի մերժել է Քրիստոսի աստվածային էռությունը, այլև՝ նրա փրկագործական առաքելությունը, որով պարզապես դիմագրկել է քրիստոնեությունը: «Թալիայում, - գրում է Աթանաս Ալեքսանդրացին, - մեղալից չարախոսությամբ հօչակված նրա մտքերն այսպիսին են. Աստված հավիտենապես Յայր չի եղել, եղել է ժամանակ, երբ նա միայն Աստված է եղել, բայց դեռևս չի եղել Յայր: Նա հետագայում է Յայր դարձել: Յավիտենապես չի եղել Որդին: Որքանով որ ամեն ինչ առաջ է եկել ոչնչից և սկիզբ ունեցող ամեն ինչ արարված է և ածանցյալ, նույն ծևով ոչնչից արարվել է նաև Աստվածային Բանը, և կար ժամա-

<sup>14</sup> Սոզոմենոսը Եկեղեցուց Վտարված Արիոսի գործակիցներ է համարում Անփալա, Աքիլլա, Կարպոնիոս, Սարմատիոս, Արիոս (այլ) քահանաներին, ինչպես նաև Եվզոյոս, Մակարիոս, Յուլիոս, Մինա և Էլլադիա սարկավագներին, մանրամասները տես՝ *Созомен Эрмий Соломонинский*. Церковная История, кн. I, гл. 15, с. 58: Սոլյառտես պատմիչը հիշատակում է նաև «նախկինում Եպիսկոպոսներ կոչվող Սեկունդոսին (Պտղոմայեցի՝ Ա. Ք.) և Թեոնային (Մարմարիկեցի՝ Ա. Ք.)», տես՝ *Сократ Схоластик*. Церковная история. М., 1996, кн. I, гл. 6, с. 11:

<sup>15</sup> Այդ ամենի մանրամասները տես՝ *Созомен Эрмий Саламинский*. Церковная История, кн. I, гл. 15, с. 58.

<sup>16</sup>Տես՝ *Св. Афанасиу Великиу*. На ариан слово первое / *Св. Афанасиу Великиу*. Творение в четырех томах. Т. II, М., 1994, с. 182: Յննտ՝ նույնի Հարությունը արան слово второе / *Св. Афанасиу Великиу*. Творение в четырех томах. Т. II, с. 293-294; նույնի Պослание о соборахъ, бывшихъ въ Ариминъ ималийскомъ и въ Селевкии исаврийскомъ / Творения в четырех томах. Т. III, с. 108:

**Նաև, երբ նա չկար:** Նա չի եղել մինչև արարվելը, և Նա սկիզբ ունի (ընդգծում ները մերն են՝ Ա. Ք.)»<sup>17</sup>: Արիոսը պնդել է նաև, թե Քրիստոսի մասին աստվածաշնչական պատումներն աներկրա վկայում են միայն մեկ քան, որ նա ի սկզբանե գտնվել է «քարձրագույն ուժերի հովանավորության ներքո»: Այդ «ընտրյալությունը» մի այնպիսի որակ է, որը տրված չի եղել որևէ այլ պատմական անհատի՝ ոչ նրանից առաջ և ոչ էլ նրանից հետո: Յիսուսն ունի հրաշափառ ծնունդ, ողջ կյանքում նրան առաջնորդում են աստվածային որակները՝ «Ճոգին», «Իմաստությունը» և «Բանը»: Բայց աստվածային այդ ստորոգելիները միանգամայն խորթ են նրա էությանը և նրա մեջ բնակվում են ինչպես «օտարին՝ օտարի մեջ» (alter in alter): Այդ ուժերի օգնությամբ Քրիստոսը հաղորդակից է դառնում «քարձրագույն իմաստությանը» և «հավիտենական ծշմարտությունները փոխանցում է մարդկանց»: Այսինքն՝ Քրիստոսի դեմքով գործել է «աստվածային քարձրագույն ուժ», այլ ոչ թե «աստվածային ինքնություն»: Այդ ազդակների ազդեցությամբ է իրականացել նաև Յիսուս Քրիստոսի «Վերելքը» դեպի բարոյական կատարելություն, որի արդյունքում «շարունակելով մարդ մնալ», նա դարձել է «Աստծու Որդի», սակայն՝ որդեգրությամբ. «Անսկիզբն է Որդուն դարձել ամեն ինչի նախասկիզբ և առաջ է քաշել նրան՝ որդեգրելով որպես հենց իր Որդի: Իրական կյանքում նա Աստծու հետ ընդհանուր ոչինչ չունի, քանի որ հավասար չէ Աստծուն և էությամբ նույնը չէ (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»<sup>18</sup>: Ու թեև Արիոսը պնդել է, որ Յիսուս Քրիստոսի երկրային կյանքի մասին ընդունելի են աստվածաշնչական բոլոր վկայությունները, այդուհանդերձ նա արմատապես մերժել է մարդեղության վարդապետությունը և պնդել, որ Քրիստոսն աստվածային կատարյալ էություն չունենալու հետևանքով ենթակա է եղել չարչարանքների և մահվան:

Այդ ամենը խթանել են նաև հակաալեքսանդրիական ընդդիմադիր հոսանքի կազմավորմանը, որի գլուխ է անցել Նիկոմեդիայի Եկեղեցու առաջնորդ «գիտնական և արքունիքում հարգի» Եվսեբիոսը, որն իր կողմնակիցներով «մոլի կերպով սկսեց պաշտպանել Արիոսի ուսմունքը»<sup>19</sup>: Իր հերթին Ալեքսանդր Ալեք-

<sup>17</sup> Св. Афanasius Великий. На ариан слово первое, с. 181.

<sup>18</sup> Steu Epiphanius S. P. N. Adversus Octoginta haereses, haer. LXIX, col. 6: Յմնտ.՝ Nicene and post-nicene Fathers (ed. by Philip Schaff). Vol. 2, Massachusetts, 1995, p. 457: Արիոսական հերձվածի պատմության ճամաչված Վերլուծաբան Դ. Գվոտկինն ընդհանրացված պնդում է, որ արիոսական քրիստոսաբանությունը հերանուսական է, քանի որ «արիոսական Քրիստոսը այլ քան չէ, քան հերանուսական կիսաստված», տես Gwatkin H. M. Studies of Arianism: chiefly referring to the character and chronology of the reaction which followed the council of Nicea. Cambridge, 1890, p. 2-3, 27: Խոկ ճամաչված Եկեղեցագետ Դ. Շուլցը պնդում է, որ «Արիոսական քրիստոսաբանությունը դոգմատիկական տեսանկյունից ներքնապես ամենասանակը և առավել ցածրարժեքն է դոգմայի պատմության մեջ հանդիպող բոլոր համակարգերից», տես Schultz H. Die Lehre von der Gottheit Christi: communicatio idiomatum. Friedrich Andreas Perthes, 1881, S. 5, 65:

<sup>19</sup> Արիոսի պաշտպանությամբ հանդես են Եկեղեց Նաև Տիրի Եպիսկոպոս Պավլինոսը, պաղեստինյան Կեսարիայի առաջնորդ Եվսեբիոս Կեսարացին և Սկյութապոլսի Եպիսկոպոս Պատրոփիլը, տես Nicene and post-nicene Fathers (ed. by Philip Schaff). Vol. 2, p. 59-60: Այդ համատեքստում արժանահիշատակ է նաև Թեոդորենտի կողմից մեջբերված Արիոսի այն վկայությունը, թե իրեն համամիտ դավանում են նաև Թեոդոր Լաոդիկեցին, Աթանաս Անարգարացին,

սանդրացին 323 թ. հրավիրեց Եգիպտոսի, Լիբիայի և Պենտապոլսի եպիսկոպոսների ժողով, որը որոշում ընդունեց ընդդեմ Արիոսի: Այդ հիման վրա Ալեքսանդրացին «Կաթողիկե Եկեղեցու սիրելի և ազնիվ ծառայողներին» հետեւ «Ենցիկլիկոնը» շրջաբերական նամակը, որով ամբողջացավ նաև IV դարակքի հակաարիոսական երրորդաբանությունը: Ալեքսանդր եպիսկոպոսի երրորդաբանական վարդապետության նասին արժեքավոր տեղեկություններ են պահպանվել նաև Ալեքսանդր Բյուզանդացուն ուղղված ուղերձում<sup>20</sup>:

Դատելով մեզ հասած վավերագրերից՝ IV դարակքի ալեքսանդրիական հակաարիոսական երրորդաբանության, հավասարապես նաև ալեքսանդրիական հանգանակի հիմքում ընկած է եղել մինչնիկեական երրորդաբանությանը բնորոշ ստորադասության, ինչպես նաև նմանության վարդապետությունը: Սակայն, ի տարբերություն մինչնիկեական այլ ըմբռնումների, Ալեքսանդր եպիսկոպոսի դոգմատիկական լուծումներն էապես մերձեցել են ուղղադավան երրորդաբանության հիմնարար սկզբունքներին, քանի որ նա Որդի Աստծու գոյությունը և էությունը բխեցրել է Յայր Աստծու գոյությունից և էությունից<sup>21</sup>:

Յիմնովին մերժելով արիոսական վարդապետության թյուր պատկերացումները՝ «Ենցիկլիկոնում» և Ալեքսանդր եպիսկոպոսին ուղղված շրջաբերականում Ալեքսանդր Ալեքսանդրացին ի լուր ամենքի հաղորդում է, որ իր ենթակայության թեմում «հայտնվել են անօրեն և քրիստոսամարտ մարդիկ, որոնք այնպիսի հավատուրաց ուսմունք են քարոզում, որն իրավամբ կարելի է «Յակաքրիստոսի նախակարապետ» անվանել»: Եվ, քանի որ «կաթողիկե Եկեղեցու միասնությունը և աստվածային Գորի պատգամները հորդորում են մտքի միասնություն և միության խաղաղություն պահպանել», մա հարկ է համարում «տեղյակ պահել այդ իրադարձությունների մասին, որպեսզի երբ տառապում կամ կենսունակ է Եկեղեցու անդամներից մեկը, նրան ցավակցեն կամ ուրախանան»: Այդ ամենից հետո Ալեքսանդր եպիսկոպոսը հանգանանորեն շարադրում է հակաարիոսական երրորդաբանության իր վարդապետական սկզբունքները, որի հավատքային

Գրիգոր Բերիացին, Աթենոս Լիոնացին, Նարկիս Ներոդիացին և որ, իբր, բոլոր արևելցիները պնդում են, որ Յայրը նախորդում է Որդուն, տես Փեօդօրում օպուկ. Կիրսկի. Церковная История, кн. I, гл. 5, с. 36:

<sup>20</sup> Ըստ Եպիփան Կիպրացու՝ հակաարիոսական պայքարում Ալեքսանդրացին Ալեքսանդրական տարբեր կենտրոններ է ուղարկել ավելի քան 70 շրջաբերական նամակներ (տես *Epirhanii S. P. N. Adversus Octoginta haereses, haer. LXIX, col. 6*), որոնցից մեզ են հասել միայն 2-ը՝ արևելյան Եպիփառություններին (տես *Сократ Схоластик*. Церковная история, кн. I, гл. 6, с. 10-13) և Թրակիայի նվիրապես Ալեքսանդրին ուղարկված (տես *Փեօդօրում օպուկ. Կիրսկի*. Церковная История, кн. I, гл. 4, с. 17-36) շրջաբերականները: Այդ հարցում ընդհանուր բնույթի տեղեկություններ կարելի է քաղել նաև Սոզոմոնի պատմությունից, տես *Созомен Эрмий Соломонский*. Церковная История, кн. I, гл. 15, с. 56-60.

<sup>21</sup> Այդ մասին տես նաև **Болотов В. В.** Лекции по истории Древней Церкви. Т. 4, с. 7-8; **Лебедев А. П.** Вселенские Соборы IV и V вековъ (Обзор ихъ догматической деятельности въ связи съ направлениями школъ Александрийскаго и Антиохийскаго). СПб., 1904, с. 22-23; **Спасский А. А.** Начальная стадия арианских движений и Первый Вселенский Собор в Никее. Исследования по истории древней Церкви, с. 15:

հիմքը Եկեղեցական ավանդությունն է՝ «Միակ և Անծին Յայր Աստծու, նրա էությունից ծնված և «ըստ ամենայնի նրան ննան» միակ Տեր Յիսուս Քրիստոսի՝ Աստծու Միածին Որդու, ինչպես նաև՝ միակ ու ծշմարիտ Սուրբ Յօնի դավանանք»:

Պաշտպանելով ուղղադավանությանը՝ Ալեքսանդր Եպիսկոպոսը, վկայակոչելով առաքելական խոսքերը, հավաստում է, թե «արիոսականները ոչինչ անել չեն կարող», քանի որ «ծշմարտությունը հաղթական է». «Լույսը չի կարող հարաբերություն ունենալ խավարի հետ, ինչպես որ չի կարող միաբանություն լինել Քրիստոսի և Բելիարի միջև (տես **ԲԿոր.**, 6: 15)»<sup>22</sup>: Արիոսականության ջանքերով ծավալված վիճաբանությունները բնութագրելով իրեն «անհանգիստ, իշխանատենչ ու արծաթասեր մարդկանց կամքի» արտահայտություն, որոնք «տարբեր շարժառիթներով հարձակվում են Եկեղեցական բարեպաշտության վրա»՝ աստվածաբանը հավաստում է, որ Արիոսն ու Աքիլլան «արատավորելով առաքելական բարեպաշտ ուսմունքը և հրեաների նման քրիստոսամարտ ժողովներ գումարելով՝ մերժում են մեր Փրկչի Աստվածությունը և դավանում, որ Նա հավասար է բոլոր մարդկանց: ... Այսպիսով, Քրիստոսի նկատմամբ պնդելով հելլենների և հրեաների անպատճաբեր կարծիքները, նրանք ... իրենց վարքով մեծացնում են հերետիկոսների մեջ Քրիստոսի դեմ ուղղված սատանայական ուժը»<sup>23</sup>:

Դատապարտելով բոլոր այն եպիսկոպոսներին, որոնք, զանց առնելով առաքելական կանոնների պահանջները, արիոսականներին հաղորդության են ընդունել և վերցրել են իրենց հովանու տակ՝ Ալեքսանդր Ալեքսանդրացին գրում է, թե այդ ամենի մասին նախապես ցանկացել է լրություն պահպանել, հուսալով, թե նոր ծևավորված հերձվածը դարձի գալով՝ կարող է վերականգնել Եկեղեցական անդորրը, թեև վստահ է նաև, որ «չարիքը, կարող է նահանալ միայն անկում ապրածների հետ»: Բայց, սպասելիքները չեն արդարացել, քանի որ «... Նիկոմեդիայի ներկա եպիսկոպոս Եվսեբիոսը, որը ենթադրում է, թե իր վրա է դրված Եկեղեցու ողջ ծանրությունը, ... անպատճի հովանավորում է այդ անկում ապրածներին և հանուն նրանց պաշտպանության հանդգնել է դիմել բոլորին, որպեսզի անտեյակներին հրապուրի դեպի ծայրահետ ողբերգական ու քրիստոսամարտ այդ հերձվածը, ապա անհրաժեշտ համարեցի խախտել լրությունը և այդ մասին տեղյակ պահել բոլորիդ, որպեսզի դուք ճանաչեք և անկում ապրածներին, և նրանց հերձվածի խղճուկ վիճակը, և որպեսզի ականջալուր չինեք, եթե Եվսեբիոսը դիմի ձեզ»<sup>24</sup>:

Այդ դիրքերից էլ հակաարիոսականության պարագույին անդրադառնում է արիոսական վարդապետության առանձնահատկությունների հետևողական մերժմանը: Ակզրունքորեն հերքելով Յայր և Որդի Աստծու Էության և հարաբերության արիոսական այն մեկնությունը, համաձայն որի «Եղել է ժամանակ, երբ Աստծու Որդին չի եղել, որ նախկինում գոյություն չունենալով Նա ավելի ուշ է ծնվել ... որ ինչպես ցանկացած մարդ նա ևս արարված է: Աստված ամեն ինչ արարել է ոչնչից, դրանով իսկ բոլոր բանական և անբանական արարածների հետ

<sup>22</sup> Մանրամասները տես **Сократ Схоластик.** Церковная история, кн. I, гл. 6, с. 11-12.

<sup>23</sup> Տես՝ **Феодорит еписк. Кирский.** Церковная история, кн. I, гл. 4, с. 18-19.

<sup>24</sup> **Сократ Схоластик.** Церковная история, кн. I, гл. 6, с. 11.

թվարկելով նաև Աստծու Որդուն»՝ Ալեքսանդր Ալեքսանդրացին գրում է, թե լսելով այդ ամենը «ո՞վ չի զարմանա և չի գոցի ականջները, որպեսզի այդ նողկալիությունը չշոշափի լսողությունը: Ո՞վ է, որ լսելով Յովհաննեսի **սկզբից էր Բանը** (Յովի., 1: 1) խոսքերը, չի դատապարտի ասողներին, թե եղել է ժամանակ, որ նա չի եղել: Կամ ո՞վ, լսելով Ավետարանի **միաժին Որդի և ամեն ինչ նրանով եղաւ** (Յովի., 1: 18, 1: 3) խոսքերը, չի ատի պնդողներին, թե Որդին արարվածներից մեկն է: Ինչպե՞ս Նա կարող է հավասար լինել իր իսկ կողմից արարված իրերին: Կամ նա ինչպե՞ս է Միաժին, եթե նրանց կարծիքով հավասարագոր է ամենքին: Ինչպե՞ս նա կարող էր առաջ գալ ոչնչից, եթե Յայրն ասում է. **սրտից քո բարի պատգամներն են բխում** (Սաղմ., 44: 2) և **թեզ արշալոյսից առաջ ծնեցի արգանդից** (Սաղմ., 109: 3): Կամ նա ինչպե՞ս կարող է նման չլինել Յոր եռլրյանը, եթե Նրա կատարյալ պատկերն է, Յոր փառը, և եթե ինքն է ասում. **ով ինձ տեսաւ, տեսաւ Յօրը** (Յովի., 14: 9): Լինելով Աստծու Բանը և իմաստությունը՝ Որդին ինչպե՞ս կարող էր ինչ-որ ժամանակ չլինել: Դա նույնն է, եթե նրանք ասեն, թե ինչ-որ ժամանակ Աստված եղել է անբարբար և ոչ իմաստուն: Ինչպե՞ս է նա փոփոխական, եթե իր մասին ասում է. **ես Յօր մէջ եմ, եւ Յայրը՝ իմ մէջ** (Յովի., 14: 10) և **ես եւ իմ Յայրը մի ենք** (Յովի., 10: 30), կամ մարզարեի թերանով բարբառում է. **ահա ես եմ ծեր Տէր Աստուածը եւ չեմ փոխուի** (Սաղաք., 3: 6): Կարող է պատահել ոմանք այդ խոսքերը կվերագրեն հենց Յորը, բայց անհամենատ պատշաճ է այդ հատվածում այն վերագրել Բանին, քանի որ Նա, մարդեղանալով հանդերձ, չի փոփոխվում, կամ, առաջալի խոսքերով ասած՝ **Յիսուս Քրիստոս նոյնն է երեկ, այսօր եւ յաւիտեան** (Եբր., 13: 8)»<sup>25</sup>:

Ավելի քան ակնհայտ է, որ հակաարիոսական հոսանքն արիոսական էկզեգետիկային հակադրում է Եկեղեցական-ավանդական էկզեգետիկան: Ալեքսանդր Ալեքսանդրացին սեփական Երրորդաբանական վարդապետությունը կառուցում է Ս. Երրորդության նաև աստվածաշնչական հիմնադրույթների մեկնության հիման վրա, որի առանցքը կազմում է հավատքային այն հիմնարար սկզբունքը, թե «Յայրը հավիտենական Յայր է, քանի որ հավիտենապես Որդի ունի, որի համար էլ Յայր է կոչվում: Եթե Յայրը հավիտենապես ունի Որդուն, ապա նա հավիտենապես կատարյալ Յայր է, օտար է բարու նկատմամբ ցանկացած անկատար հարաբերության և միաժին Որդուն ծնել է անժամանակային, ոչ ժամանակի ընթացքում և ոչ էլ՝ ոչնչից»<sup>26</sup>: Չբավարարվելով այդքանով՝ Եպիսկոպոսապետն իր պարտըն է համարում մեկնարանել նաև Յիսուս Քրիստոսի որդեղության խորհուրդը: Այդ փաստն է վկայում աստվածաբանի միանգամայն հիմնավորված այն պնդումը, թե «... մեր Փրկչի Որդի լինելը ընդհանուր ոչինչ չունի մարդկային որդիների հետ: Ինչպես որ անձառելի է Նրա (Որդի Աստծու՝ Ա. ք.) հիպոստասը (Էռլրյունը՝ Ա. ք.), անհամենատ բարձր իր իսկ կողմից կեցություն ստացած արարածներից, այնպես էլ անձառելի է Նրա Որդի լինելը, որն ըստ էռլրյան նասնակից է Յոր Աստվածությանը, տնօրինաբար բարձր է մարդու որդիներից, որոնք նրա շնորհիվ են որդեգրություն ստանում: Քանի որ Նրա բնությունն անփոփոխ է, ապա Նա ըստ ամենայնի կատարյալ է և ոչնչի կարիք չունի, իսկ նրանք

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>26</sup> **Феодорум еписк. Кирский.** Церковная история, кн. I, гл. 4, с. 24-25.

(մարդու որդիները՝ Ա. Ք.) Ենթարկվելով դրական կամ բացասական փոփոխությունների, մշտապես Նրա (Հիսուս Քրիստոսի՝ Ա. Ք.) օգնության կարիքն ունեն (ընդգծումները մերն են՝ Ա. Ք.)»<sup>27</sup>: Ավելորդ չէ հիշատակել, որ այդ ամենը փաստում են ալեքսանդրյան դպրոցի մինչնիկեական երրորդաբանության օրգանական կապն ավանդական-եկեղեցական հավատքային ըմբռնումների նկատմամբ:

Զարգացնելով Որդի Աստծու մասին դոգմատիկական այդ հայեցակարգը՝ Ալեքսանդր Եպիսկոպոսն այն հակադրում է անձնավորման արիոսական վարդապետությանը և հանգում ընդհանրացնող այն հետևությանը, թե «Մեր Տերը բնությամբ լինելով Յոր Որդին, բոլորից երկրպագություն է ընդունում, իսկ մարդիկ որդեգրության ոգի են ստանում միայն այն ժամանակ, երբ բարի գործերի և ինքնակատարելագործման շնորհիվ ազատագրվում են գործունեության ոգուց և այդպիսով Որդու բնության բարերարությամբ որդի են դաշնում որդեգրականությամբ»<sup>28</sup>: Դակաերրորդաբանության նկատմամբ Եկեղեցական ավանդության վրա խարսխված այդ մոտեցումների ընդհանրացման հիման վրա Ալեքսանդր Ալեքսանդրացին իր և ուղղադավան վարդապետությանը հետամուտ ալեքսանդրիական Եպիսկոպոսների անունից ի լուր ամենքի հռչակում է առաքելական հավատամքի նկատմամբ հավատարմությունը, որն աստվածաբանը շարադրում է հետևյալ կերպ. «մենք հավատում ենք միակ անծին Յորը, որը կեցության ոչ մի պատճառ չունի, անեղին ու անփոփոխին, հավիտենապես նույնականին և միակին, աճ կամ նվազում չունեցողին, օրենք, մարգարեներ և ավետարաններ պարզեցնին, նահապետների, առաքյալների ու բոլոր սրբերի Տիրոջը, և մի Տեր Հիսուս Քրիստոսի, Աստծու Որդուն, Միածնին, ծնված ոչ թե ոչնչից, այլ Յոր Էռլությունից՝ ոչ թե մարմնի նմանությամբ, բաժանմամբ կամ մասերի անջատմամբ, ինչպես սովորեցնում են Սարելը և Վալենտինոսը, այլ անճառելի և անբացատրելի, ինչպես վկայում է մարգարեի հետևյալ խոսքերը. Եւ Նրա ազգատոհմի մասին ո՞վ պիտի պատմի (Եսայի, 53: 8): Նրա Էռլությունը հասանելի չէ արարվածներից ոչ մեկին, ինչպես որ անհաս է Յայրը, քանի որ բանական արարածների բնությունն ի գորու չէ ընկալելու Յոր Աստվածածնությունը»<sup>29</sup>:

Այդ ամենը թույլ են տալիս փաստել, որ ի հակադրություն արիոսական ռացիոնալ երրորդաբանությանը հանձին ալեքսանդրիական վարդապետության՝ IV դարասկզբի հակաարիոսական երրորդաբանությունն առաջնային է համարել հայտնութենական աստվածաբանությունը, որի հիմնավորումները բխեցվել են Աստվածաշնչից: Բայց, քանի որ արիոսական երրորդաբանության բոլոր հիմնադրույթները ևս «հիմնավորվում էին» աստվածաշնչական դրույթներով, Ալեքսանդր Եպիսկոպոսը դրանց քննադատությունը համարում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման: Յամոզված լինելով այն բանում, որ արիոսական մեկնություններում «յուրահատուկ խաղ» է ծավալվում Աստվածաշնչում Քրիստոսին աղերսվող եզրերի հետ, նա մեծ ուշադրություն է դարձնում հատկապես «Եղել է», «հավիտենապես» և «դարերից առաջ» աստվածաբանա-

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 25-26:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 31:

կան եզրերի մեկնությանը և մատնանշում է, որ դրանք ամենակին էլ նույն իմաստը չունեն, ինչ «անծին» եզրը: Այդ դիրքերից աստվածաբանը պնդում է նաև, որ Յիսուս Քրիստոսի նկատմամբ «եղել է», «հավիտենապես» և «դարերից առաջ» եզրերը պետք է օգտագործել «բարեպաշտորեն, ամենակին էլ չմերժելով Նրա Աստվածությունը»<sup>30</sup>:

Սակայն պետք է նշել, որ այդ ամենով հանդերձ «Ենցիկլիկոնում» տեղ գտած աստվածաբանական սկզբունքային մոտեցումները շատ ավելի մերձ են որիգինականությանը (անշուշտ՝ հիմնական թերություններից զերծ)<sup>31</sup>: Այդ փաստի հիմնավորմանն են ծառայում Ալեքսանդր Ալեքսանդրացու կողմից հռչակված Երրորդաբանական որոշ թեզեր: Նախ, Յայր և Որդի Աստծուն համարելով էակից, «ուղերձում» և «Ենցիկլիկոնում» նա հիմնավորում է ոչ թե համագոյության, այլ՝ համանմանության վարդապետությունը: «Մենք գիտենք, - այդ կապակցությանը գրում է Ալեքսանդր Եախսկոպոսը, - որ ինչպես և Յայր, Աստծու Որդին անեղ է և անփոփոխ, ոչ մի կարիք չունի, Յորը նմանվող կատարյալ Որդի է և միայն ծնունդով է տարրերվում նրանցից: Աստծու Որդին Յորն ըստ ամենայնի նմանվող, ծշգրիտ և ոչնչով չտարբերվող պատկերն է, քանի որ Նրան բնորոշ է այն ամենը, որով արտահայտվում է նրա առավելագույն նմանությունը Յորը (ընդունմերը մերն են՝ Ա. Ք.)»<sup>32</sup>:

Քաջածանոթ լինելով այն բանին, որ գնոստիկյան և մոդալիստական հակաԵրրորդաբանական մեկնություններում Յայր և Որդի Աստծու բնությունը նույնացվել, կամ «միաստվածությունը պահպանելու» միտումով Որդի Աստծու բնությունը տարրալուծվել է Յայր Աստծու բնության մեջ՝ Ս. Երրորդության Եկեղեցական ուսմունքի պաշտպանության միտումով Ալեքսանդր Ալեքսանդրացին ընդհանրացնում է. «Այսպիսով, անծին Յորը մենք պետք է առանձնահատուկ արժանիքներ վերագրենք, ասելով, որ իր կեցության համար նա ոչ մի պատճառ չունի, Որդուն ևս պետք է առանձնահատուկ, իրեն համապատասխան պատիվ վերագրել՝ Յորից անսկիզբ ծնունդ վերագրելով և, ինչպես վերն ասվեց, նրան երկրպագել այնպես, որպեսզի եղել է, մշտապես և դարերից առաջ բառերը նրա նկատմամբ գործածվեն բարեպաշտությամբ և բարեշնորհությամբ՝ չմերժելով ամենակին Նրա Աստվածությունը, այլ ըստ ամենայնի տեսմել Յոր պատկերի հետ Նրա ունեցած ամենածշգրիտ նմանությունը, անծին լինելը համարել հատկու-

<sup>30</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 33:

<sup>31</sup> Ալեքսանդրիական հանգանակում Ս. Երրորդության մասին հավաստվում է հետևյալը. «Մենք նրան (Ս. Երրորդության՝ Ա. Ք.) հավատում ենք այսպես, ինչպես ընդունված է առաքելական Եկեղեցում, այսինքն մեկ Անծին Յորը ... և մեկ Տեր Յիսուս Քրիստոսուհին, Աստծու միաժին Որդում՝ ծնված ոչ թե ոչնչից, այլ Յորից, ... ի լրումն Յոր և Որդու վերաբերյալ բարեպաշտ այս ուսմունքի, ինչպես աստվածային գրքերն են ուսուցանում, մենք դավանում ենք Մեկ Սուլր Յոզի, որը նորացրեց և Յիսուսի սրբերին, և Նոր ուխտի մերժնչյալ ուսուցիչներին, - մեկ և միայն մեկ ընդհանրական Եկեղեցի ... Սրանցից հետո մենք ընդունում ենք մեռյալների հարությունը, որոնցից անդրամիկը մեր Տեր Յիսուս Քրիստոսն էր, որը Մարիամ Աստվածամորից մարմին էր առել իրապես, այլ ոչ թե երևութապես, որը բնակվել է մարդկային ցեղի մեջ, խաչվել ու մահացել ... հարություն առել մեռյալներից, բարձրացել երկինք, նստած է Մեծության աջ կողմում», տե՛ս *Kelli J. N. D. Early Christian Creeds*, p. 188-189.

<sup>32</sup> **Феодорит еписк. Кирский.** Церковная история, кн. I, гл. 4, с. 31-32.

թյուն, որը բնորոշ է միայն Յորը, ինչպես որ ինքը՝ Փրկիչն ասաց. **իմ Յայրը մեծ է, քան ես:** Յոր և Որդու նասին աստվածային Գրքերի վրա հենված բարեպաշտ այս կարծիքից բացի, մենք հավասարապես դավանում ենք միակ Սուրբ Յոգուն, որը նորոգում է ինչպես Յին Կտակարանի սուրբ մարդկանց, այնպես էլ՝ Նոր կոչ վող Կտակարանի աստվածային հիմնադիրներին»<sup>33</sup>:

#### АЛЕКСАНДРИЙСКАЯ ТРИОДОЛОГИЯ НАЧАЛА IV ВЕКА

*A. G. Kalashyan*

Александрийская антиарянская триодология первой четверти IV века неразрывно связана с именем «первого ратоборца против арианства» и «ревнителя православия» Александра Александрийского. Сущность триодологических воззренийalexandrianского епископа изложена в «Энциклике» – окружном послании ко всем православным епископам и в послании на имя Александра, ставшего между епископами Фракийского округа.

В полемике с арианским лжеучением Александр Александрийский проводит в полном виде Исповедание веры, хранимое в Церкви Александрийской, где утверждается «исконное божество единородного Иисуса Христа, рожденного из сущего Отца», и Ему приписывается «безначальное рождение от Отца, признавая в Нем точное соответствие образа Отца». В этом плане триодологическое богословское учение епископа Александра тесно связано с орigenизмом и с малоазиатскими традициями III века.

#### ALEXANDRIAN TRIDOLOGY AT THE BEGINNING OF IV CENTURY

*A. G. Kalashyan*

The Alexandrian anti-Arian Tridology of the first quarter of IV century is inextricably linked with the name of “the first mighty man against Arianism” and “zealot of Orthodoxy” - Alexander of Alexandria. The essence of the Trinitarian views of Alexandrian bishop set forth in “Entsiklikone” - Encyclical to all Orthodox bishops, and in his letter to Alexander, the oldest among the bishops of the Thracian region.

Within the framework of Arian false doctrine Alexander of Alexandria states the Creed of Faith, maintained in the Church of Alexandria and asserting that “pure divinity of Jesus Christ, only begotten, begotten from the nature of the Father” and he is ascribed to “infinite birth from the Father, recognizing in him the exact compliance with the image of the Father”. In this regard, Trinitarian theological doctrine of Bishop Alexander is closely connected with Asia Minor Origenism and traditions of the III century.

---

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 33: